Ջաջուռ

Ջաջուռ բնակավայրի վարչական տարածքը կազմում է 2416.21հա, բնակչությունը 779 մարդ: Գյուղը գտնվում է Շիրակի լեռնաշղթայի արևմտյան ստորոտում՝ ծովի մակարդակից 1700 մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գտնվում է մարզկենտրոնից 12 կմ հեռավորության վրա: Գյուղում կա՝ միջնակարգ դպրոց, բուժամբուլատորիա, արհեստական ջրամբար: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Բնակավայրի տարածքում 19-րդ դարում կառուցվել է երկաթուղու թունելը՝ 2 կմ երկարությամբ: Ջաջուռ գյուղում է ծնվել հայտնի նկարիչ Մինաս Ավետիսյանը, որտեղ գտվում է նրա անունը կրող թանգարանը, ցուցադրված են նրա հայտնի աշխատանքներից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ: